ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2018-05-31

«ԻՆՏԵՐՆԵՏ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՏՎԱԾ»
Հասարակական կազմակերպություն (ՀԿ)

Գրանցման համար	211.171.1019958
Հիմնադրման տարի	2018
Գրանցման ամսաթիվ	2018-05-31
Գործունեության ժամկետ	Անժամկետ
Կարգավիճակ	Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	51073808
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	00181988
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր)	179958
Էլ. փոստ	-
Կայք	-

Գտնվելու վայրը

Հասցե	Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ Փ. / Շ / 17 / ԲՆ.3 ԱՐԱԲԿԻՐ 0012 ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
Հեռախոս	091-41-55-39

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն	Նախագահ
Անուն Ազգանուն	ԻԳՈՐ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ԲՈՐԻՍԻ
Անձնագրային տվյալներ	AK0695935 2011-02-01 004
Հասցե	ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆԻ Փ. / Շ / 4 / 22 ԱՐԱԲԿԻՐ 0033 ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ ըստ 2018-05-29
«ԻՆՏԵՐՆԵՏ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՏՎԱԾ»
Հասարակական կազմակերպություն (ՀԿ)

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) **գրառված չեն**

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Պետական միասնական գրանցամատյանում փոփոխություններ կատարված չեն

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ

Քաղվածքը տրամադրող՝ _____ **Լալա Ներսեսյան**
ստորագրություն

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ **31-05-2018**

05

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ

Կազմված է 10.05.2018թ.
Բաղկացած է 12 էջից
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Ինտերնետ հասարակության Հայաստան հատված» հասարակական կազմակերպության հիմնադիր ժողովի 10.05.2018թ.-ի թիվ 2018/1 որոշմամբ

Նախագահ՝ _____ Ի.Մկրտումյան

Տպագրված է ընդամենը 2 օրինակ
Օրինակ 1
ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
«31» 05 2018թ.

Գրանցման թիվ 211.171.1019958

Հարկ վճարողի հաշվառման համար
00181988

05

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«Ինտերնետ հասարակության Հայաստան հատված» հասարակական կազմակերպության

2018թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ինտերնետ հասարակության Հայաստան հատված» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:
2. Կազմակերպությունն առանց անդամության սահմանափակման հասարակական միավորում է:
3. Կազմակերպությունը ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:
4. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ:
5. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են՝
   1) օրինականությունը,
   2) խտրականության բացառումը,
   3) բարեխղճությունը,
   4) անդամների շահերի ընդհանրությունը,
   5) անդամության կամավորությունը,
   6) ինքնակառավարումը,
   7) հաշվետվողականությունը:
6. Կազմակերպությունն ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, գործունեության առարկան, նպատակները և ձևերը:
7. Կազմակերպության հայերեն լրիվ անվանումն է՝ «Ինտերնետ հասարակության Հայաստան հատված» հասարակական կազմակերպություն:
8. Կազմակերպության անգլերեն լրիվ անվանումն է՝ „Internet society Armenia chapter„ public organization:
9. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Ա. Խաչատրյան 17, բնակարան 3:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

10. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակն է՝ խթանել և աջակցել ինտերնետի զարգացմանը Հայաստանի Հանրապետությունում՝ ի շահ հայաստանյան հասարակության:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

11. Կազմակերպության անդամ կարող են դառնալ տասնութ տարին լրացած և «Ինտերնետ Սըսայթի» ոչ առևտրային կազմակերպության („Internet Society„ non-profit organization) անդամ հանդիսացող՝
    1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,
    2) օտարերկրյա պետությունների այն քաղաքացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր Հայաստանի Հանրապետությունում ունեն տնտեսական շահ: Սույն ենթակետի իմաստով տնտեսական շահ է համարվում Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը և (կամ) Հայաստանի Հանրապետությունում սեփականության իրավունքով անշարժ գույք ունենալը և (կամ) հիմնական աշխատանքի վայրը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու պայմանով՝ Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական (աշխատանքային) գործունեություն իրականացնելը և (կամ) Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում առկա ուսուցում (կրթություն) ստանալը:
12. Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը Կազմակերպության նախագահի անունով ներկայացնում է դիմում: Դիմումին պետք է կցված լինեն Կազմակերպության անդամ դառնալու համար սույն կանոնադրությամբ սահմանված պահանջները բավարարող ապացույցներ: Դիմումը բավարարում կամ մերժում է Կազմակերպության նախագահը՝ Կազմակերպության կողմից դիմումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձի դիմումը մերժվում է, եթե՝
    1) վերջինս չի բավարարում Կազմակերպության անդամ դառնալու համար սույն կանոնադրությամբ սահմանված պահանջները,
    2) ներկայացված տեղեկությունները և փաստաթղթերը թերի են կամ ակնհայտ կեղծ կամ դրանցում առկա են անճշտություններ:
13. Կազմակերպության անդամը կարող է ցանկացած ժամանակ դուրս գալ Կազմակերպությունից: Կազմակերպությունից դուրս գալու ցանկություն ունեցող Կազմակերպության անդամը Կազմակերպության նախագահի անունով ներկայացնում է Կազմակերպությունից դուրս գալու մասին դիմում: Կազմակերպության կողմից դիմումը ստանալու օրվանից Կազմակերպության տվյալ անդամի անդամակցությունը համարվում է դադարեցված:
14. Կազմակերպության անդամը կարող է հեռացվել Կազմակերպությունից՝ Կազմակերպության անդամ դառնալու համար սույն կանոնադրությամբ սահմանված պահանջներին չբավարարելու կամ սույն կանոնադրությամբ սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում կամ եթե պարզվում է, որ անձը Կազմակերպությանն անդամագրվելիս ներկայացրել է կեղծ կամ սխալ տեղեկություններ և (կամ)

փաստաթղթեր: Կազմակերպության անդամին Կազմակերպությունից հեռացնում է Կազմակերպության խորհուրդը:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

15. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝
    1) սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտրելու և ընտրվելու Կազմակերպության կառավարման կամ վերահսկողություն իրականացնող մարմիններում,
    2) անձամբ ներկա լինելու Կազմակերպության համաժողովի ժողովներին կամ Կազմակերպության կոլեգիալ կառավարման այլ մարմինների նիստերին,
    3) Կազմակերպության խորհրդի սահմանած կարգով անվճար օգտվելու Կազմակերպության ծառայություններից,
    4) ծանոթանալու Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալու նրանց ընդունած որոշումների պատճենները,
    5) բողոքարկելու Կազմակերպության այլ մարմինների որոշումները Կազմակերպության համաժողովին՝ վերջինիս քննարկմանը ներկայացնելով համապատասխան դիմում, դատական կարգով բողոքարկելու Կազմակերպության մարմինների որոշումները,
    6) Կազմակերպությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ սույն կանոնադրության փոփոխությունների, Կազմակերպության մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին,
    7) Կազմակերպության աշխատանքները բարելավելու նպատակով Կազմակերպության մարմիններին ներկայացնելու առաջարկություններ,
    8) մասնակցելու Կազմակերպության կողմից կազմակերպվող գիտաժողովներին, սեմինարներին, կրթական և գիտահետազոտական ծրագրերին և նման այլ միջոցառումներին,
    9) իրականացնելու օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:
16. Կազմակերպության անդամը պարտավոր է՝
    1) կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և Կազմակերպության կառավարման մարմինների որոշումները,
    2) բարեխղճորեն կատարել Կազմակերպության կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները,
    3) սահմանված ժամկետում և չափով վճարել տարեկան անդամավճար:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17. Կազմակերպությունն իրավունք ունի՝
    1) իր անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող,
    2) բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով,
    3) ստեղծելու այլ կազմակերպություն (այդ թվում՝ առևտրային կազմակերպություն) կամ լինելու նրա մասնակից,
    4) ստեղծելու առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ,
    5) համագործակցելու միջազգային և օտարերկրյա ոչ առևտրային կազմակերպությունների հետ, անդամակցելու դրանց՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը, ինչպես նաև ունենալու միջազգային այլ կապեր,
    6) տեղեկատվություն տարածելու իր գործունեության մասին,
    7) կազմակերպելու և անցկացնելու խաղաղ, առանց զենքի հավաքներ,
    8) մշակելու և իրականացնելու կրթական, գիտահետազոտական և այլ ծրագրեր, կազմակերպելու գիտաժողովներ, սեմինարներ, հասարակական քննարկումներ և նման այլ միջոցառումներ,
    9) օրենքով սահմանված կարգով իր աշխատանքներում ներգրավելու կամավորների,
    10) կատարելու օրենքով չարգելված այլ գործողություն:
18. Կազմակերպությունը պարտավոր է՝
    1) վարել իր անդամների և կամավորների հաշվառումը,
    2) պաշտոնական կայքի առկայության դեպքում հասցեի վերաբերյալ ծանուցել իրավաբանական անձանց պետական գրանցման լիազոր մարմնին,
    3) Կազմակերպության անդամի պահանջով ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու սույն կանոնադրությանը, Կազմակերպության հիմնադիր այլ փաստաթղթերի, Կազմակերպության համաժողովի որոշումներին կամ տրամադրել դիմողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Սույն ենթակետում նշված տեղեկությունները, փաստաթղթերը տրամադրելու համար կարող է գանձվել վճար, որը չի կարող գերազանցել դրանք տրամադրելու համար կատարված ծախսերը,

4) սույն կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև Կազմակերպության վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով դիմել իրավաբանական անձանց պետական գրանցման լիազոր մարմնին,
5) իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության նախագահի հաստատմանը՝ ապահովելով դրանց հրապարակայնությունը,
6) կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

19. Կազմակերպության կառավարման մարմիններն են՝ Կազմակերպության համաժողովը, Կազմակերպության խորհուրդը (կոլեգիալ կառավարման մարմին), Կազմակերպության նախագահը և Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը:
20. Կազմակերպության համաժողովը Կազմակերպության բարձագույն մարմինն է և ունի Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերջնական լուծման վերաբերյալ որոշում կայացնելու իրավունք:
21. Կազմակերպության համաժողովն իր աշխատանքներն իրականացնում է ժողովների միջոցով:
22. Կազմակերպության համաժողովի հերթական ժողովները գումարվում են երկու տարին մեկ անգամ՝ Կազմակերպության խորհրդի կողմից: Հերթական ժողովի անցկացման եղանակը, ժամանակը և վայրն որոշում է Կազմակերպության խորհուրդը: Կազմակերպության խորհուրդը կազմում է Կազմակերպության համաժողովի հերթական ժողովի օրակարգի նախագիծը:
23. Հերթական ժողովի օրակարգի նախագծի, անցկացման եղանակի, ժամանակի, վայրի մասին Կազմակերպության անդամները պետք է ծանուցվեն պատվիրված նամակով կամ էլեկտրոնային փոստով՝ ոչ ուշ, քան հերթական ժողովի անցկացման օրվանից տասնչորս օր առաջ՝ հավաստելով հասցեատիրոջ կողմից ծանուցումը ստանալու փաստը:
24. Կազմակերպության համաժողովի արտահերթ ժողովները գումարվում են Կազմակերպության խորհրդի կողմից՝
    1) վերջինիս նախաձեռնությամբ,
    2) Կազմակերպության նախագահի նախաձեռնությամբ,
    3) Կազմակերպության անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ,
    4) Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախաձեռնությամբ:

    Արտահերթ ժողովը գումարվում է սույն կետով նախատեսված նախաձեռնությունից ոչ ուշ, քան տասը օրվա ընթացքում՝ Կազմակերպության համաժողովի արտահերթ ժողով գումարելու նախաձեռնությամբ հանդես եկած

Կազմակերպության մարմնի (անձանց) կողմից ներկայացված օրակարգի նախագծով: Արտահերթ ժողովի անցկացման եղանակը, ժամանակը և վայրն որոշում է Կազմակերպության խորհուրդը:

25. Արտահերթ ժողովի օրակարգի նախագծի, անցկացման եղանակի, ժամանակի, վայրի մասին Կազմակերպության անդամները պետք է ծանուցվեն պատվիրված նամակով կամ էլեկտրոնային փոստով՝ ոչ ուշ, քան արտահերթ ժողովի անցկացման օրվանից հինգ օր առաջ:
26. Կազմակերպության համաժողովի հերթական կամ արտահերթ ժողովները գումարվում են Կազմակերպության անդամների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ:
27. Կազմակերպության համաժողովի ժողովն իրավազոր է, եթե գումարվել է օրենքին և սույն կանոնադրությանը համապատասխան, և ժողովին մասնակցում է Կազմակերպության բոլոր անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Կազմակերպության համաժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող Կազմակերպության անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
28. Կազմակերպության համաժողովի ժողովի արձանագրությունն ստորագրում են ժողովի նախագահողը և քարտուղարը: Ժողովի արձանագրությունները պահպանվում են հինգ տարի ժամկետով:
29. Կազմակերպության համաժողովի որոշումը, որն ընդունվել է օրենքի կամ սույն կանոնադրության խախտմամբ կամ ոտնահարել է Կազմակերպության կամ նրա անդամի իրավունքներն ու օրինական շահերը, կարող է դատական կարգով անվավեր ճանաչվել Կազմակերպության կամ նրա անդամի դիմումի հիման վրա: Դիմումը կարող է տրվել վաթսուն օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ Կազմակերպության անդամն իմացել է կամ պարտավոր էր իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:
30. Կազմակերպության համաժողովը՝
    1) կատարում է Կազմակերպության կանոնադրությունում փոփոխություններ կամ լրացումներ, հաստատում է կանոնադրությունը նոր խմբագրությամբ,
    2) ստեղծում է այլ իրավաբանական անձ, որոշումներ ընդունում այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին,
    3) հաստատում է Կազմակերպության կառուցվածքը,
    4) ընտրում է Կազմակերպության նախագահին, որոշում է ընդունում Կազմակերպության նախագահի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու (զբաղեցրած պաշտոնից ազատելու) մասին,
    5) որոշումներ է ընդունում Կազմակերպության խորհրդի, Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի կազմավորման մասին,
    6) սահմանում է Կազմակերպության խորհրդի անդամների թվաքանակը, ընտրում է Կազմակերպության խորհրդի անդամներին, բացառությամբ

Կազմակերպության նախագահի, ով ի պաշտոնե հանդիսանում է Կազմակերպության խորհրդի անդամ,

7) ընտրում է Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի անդամներին, որոշում է ընդունում Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու (զբաղեցրած պաշտոնից ազատելու) մասին,

8) դադարեցնում է Կազմակերպության մարմինների իրավական ակտերի պահանջներին և սույն կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունը,

9) ընդունում է որոշում Կազմակերպության վերակազմակերպման մասին,

10) ընդունում է որոշում Կազմակերպությունը լուծարելու մասին, բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի:

31. Կազմակերպության խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) կազմված է նվազագույնը՝ հինգ, առավելագույնը՝ տասներեք անդամից: Խորհրդի անդամների թվաքանակը սահմանում է Կազմակերպության համաժողովը:

32. Խորհրդի անդամներն ընտրվում են Կազմակերպության համաժողովի կողմից, բացառությամբ Կազմակերպության նախագահի, ով ի պաշտոնե հանդիսանում է Խորհրդի անդամ: Կազմակերպության խորհրդի անդամներն ընտրվում են երկու տարի ժամկետով:

33. Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնում է Կազմակերպության խորհուրդը: Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում Կազմակերպության խորհուրդը գումարում է Կազմակերպության համաժողովի արտահերթ ժողով: Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվելու դեպքում Կազմակերպության համաժողովն ընտրում է Խորհրդի նոր անդամ՝ սահմանված ժամկետի մնացած ժամանակահատվածի համար կամ փոփոխում է իր կողմից սահմանված Խորհրդի անդամների թվաքանակը:

34. Կազմակերպության խորհուրդն իր կազմից երկու տարի ժամկետով ընտրում է Կազմակերպության խորհրդի նախագահ և Կազմակերպության խորհրդի փոխնախագահ: Խորհրդի նախագահը և փոխնախագահն ընտրվում են Կազմակերպության տվյալ խորհրդի լիազորություններն ուժի մեջ մտնելու օրը: Կազմակերպության նախագահը չի կարող միաժամանակ հանդիսանալ Խորհրդի նախագահ:

35. Խորհրդի նախագահը՝

1) համակարգում է Խորհրդի աշխատանքը,

2) գումարում և վարում է Խորհրդի նիստերը,

3) ստորագրում է Խորհրդի որոշումները և նիստերի արձանագրությունները:

Խորհրդի նախագահի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվելու դեպքում մինչև սահմանված ժամկետի մնացած ժամանակահատվածի համար Կազմակերպության խորհրդի նախագահ ընտրելը կամ Խորհրդի նախագահի

բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում Խորհրդի նախագահի պարտականությունները կատարում է Կազմակերպության խորհրդի փոխնախագահը:

36. Կազմակերպության խորհուրդն իր իրավասությունների շրջանակում ընդունում է որոշումներ:

37. Կազմակերպության խորհուրդն իր որոշումներն ընդունում է նիստերի միջոցով: Հերթական նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան վեց ամիսը մեկ անգամ: Արտահերթ նիստերը գումարվում են՝
   1) Կազմակերպության նախագահի նախաձեռնությամբ,
   2) Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախաձեռնությամբ,
   3) Խորհրդի առնվազն երեք անդամի նախաձեռնությամբ:

   Արտահերթ նիստերը գումարվում են սույն կետով նախատեսված նախաձեռնությունից ոչ ուշ, քան տասը օրվա ընթացքում:

38. Կազմակերպության խորհրդի նիստերը կարող են անցկացվել Խորհրդի անդամների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ:

39. Կազմակերպության խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումն ընդունվում է նիստին մասնակցող Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

40. Կազմակերպության խորհուրդը՝
   1) հաստատում է Կազմակերպության ռազմավարությունը,
   2) որոշումներ է ընդունում Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին,
   3) սահմանում է տարեկան անդամավճարի չափը և դրա գանձումը կազմակերպելու կարգը,
   4) սահմանում է Կազմակերպության նախագահի վարձատրության կարգը և պայմանները,
   5) երկու տարին մեկ հաստատում է Կազմակերպության նախագահի կողմից Կազմակերպության համաժողովի հերթական ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները: Սույն ենթակետում նշված հաշվետվությունները Խորհրդի հաստատմանն են ներկայացվում դրանց վերաբերյալ Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի եզրակացության հետ միասին,
   6) իր կողմից սահմանված դեպքերում և կարգով որոշում է ընդունում Կազմակերպության խորհրդի անդամի (այդ թվում՝ Կազմակերպության խորհրդի նախագահի և փոխնախագահի) լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու (զբաղեցրած պաշտոնից ազատելու) մասին,
   7) նշանակում է նախագահի, փոխնախագահի լիազորություններ վաղաժամկետ

դադարեցնելու դեպքում իր կազմից ընտրում է Կազմակերպության խորհրդի նախագահ, փոխնախագահ՝ սահմանված ժամկետի մնացած ժամանակահատվածի համար,

7) սահմանում է իր նիստերի անցկացման կարգը,
8) սահմանում է Կազմակերպության անդամների էթիկայի կանոնները,
9) Կազմակերպության գործունեությանն առնչվող տարաբնույթ հարցերի շուրջ եզրակացություններ կամ առաջարկություններ ներկայացնելու նպատակով ստեղծում է հանձնաժողովներ, կոմիտեներ, աշխատանքային խմբեր,
10) իրականացնում է սույն կանոնադրությամբ կամ Կազմակերպության համաժողովի որոշմամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

41. Կազմակերպության նախագահն ընտրվում է Կազմակերպության համաժողովի կողմից՝ երկու տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի, քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Կազմակերպության նախագահի պաշտոնում:

42. Կազմակերպության նախագահի իրավասությունները ներառում են Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարման, ինչպես նաև Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունն ապահովելուն ուղղված բոլոր հարցերը:

43. Կազմակերպության նախագահը՝

1) ապահովում է Կազմակերպության համաժողովի և Կազմակերպության կոլեգիալ կառավարման այլ մարմինների որոշումների կատարումը,
2) առանց գույքի արժողության սահմանափակման տնօրինում և կառավարում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից,
3) ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,
4) տալիս է լիազորագրեր,
5) բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,
6) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
7) հաստատում է Կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը,
8) հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները,

9) հաստատում է Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները,
10) երկու տարին մեկ Կազմակերպության խորհրդի հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության համաժողովի հերթական ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում իր կողմից հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները,
11) առաջարկություններ է ներկայացնում Խորհրդին Կազմակերպության անդամներին Կազմակերպությունից հեռացնելու վերաբերյալ՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորումներ,
12) իրականացնում է օրենքով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

44. Կազմակերպության նախագահն իր լիազորություններն իրականացնելիս Կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի:
45. Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Վերստուգիչ հանձնաժողով) կազմված է երեք անդամից՝ նախագահ և երկու անդամ: Վերստուգիչ հանձնաժողովի անդամներն ընտրվում են Կազմակերպության համաժողովի կողմից՝ երկու տարի ժամկետով:
46. Կազմակերպության խորհրդի անդամները և Կազմակերպության նախագահը չեն կարող միաժամանակ հանդիսանալ Վերստուգիչ հանձնաժողովի անդամ:
47. Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովն իր իրավասությունների շրջանակում ընդունում է որոշումներ:
48. Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովն իր որոշումներն ընդունում է նիստերի միջոցով: Հերթական նիստերը գումարվում են Վերստուգիչ հանձնաժողովի նախագահի կողմից ոչ ուշ, քան վեց ամիսը մեկ անգամ: Արտահերթ նիստերը գումարվում են Վերստուգիչ հանձնաժողովի նախագահի կողմից՝ Կազմակերպության անդամների առնվազն մեկ երրորդի կամ Կազմակերպության խորհրդի կամ Կազմակերպության նախագահի կամ Վերստուգիչ հանձնաժողովի առնվազն մեկ անդամի նախաձեռնությամբ: Արտահերթ նիստերը գումարվում են սույն կետով նախատեսված նախաձեռնությունից ոչ ուշ, քան տասը օրվա ընթացքում:
49. Վերստուգիչ հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Վերստուգիչ հանձնաժողովի առնվազն երկու անդամ: Որոշումն ընդունվում է, եթե դրան կողմ է քվեարկել Վերստուգիչ հանձնաժողովի առնվազն երկու անդամ:
50. Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը՝
1) տարին մեկ անգամ իրականացնում է Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում,

2) եզրակացություն է տալիս Կազմակերպության խորհրդի հաստատմանը ներկայացվող Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունների վերաբերյալ,
3) իրականացնում է սույն կանոնադրությամբ և Կազմակերպության համաժողովի որոշմամբ նախատեսված այլ լիազորություններ:

51. Վերստուգիչ հանձնաժողովն իրավասու է ծանոթանալու Կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին և պարտադիր քննարկման ենթակա գրավոր առաջարկություններ ներկայացնելու Կազմակերպության այլ մարմիններին, պահանջելու և ստանալու Կազմակերպության գործունեության վերաբերյալ տեղեկություններ:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

52. Կազմակերպությունը՝ որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունն որպես սեփականություն կարող է ունենալ օրենքով չարգելված ցանկացած գույք:
53. Կազմակերպության գույքը նրա անդամների միջև չի բաշխվում: Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել սույն կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար:
54. Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝
1) Կազմակերպության անդամների ներդրումները,
2) Կազմակերպության անդամների վճարումները (անդամավճարները),
3) իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ կազմակերպությունից ստացված միջոցները,
4) նվիրաբերությունները, այդ թվում՝ դրամաշնորհները,
5) հանգանակությունները,
6) օրենքով չարգելված այլ միջոցներ:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

55. Կազմակերպության վերակազմակերպման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են օրենքով:
56. Կազմակերպությունը լուծարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև սնանկության հետևանքով:
57. Կազմակերպությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե:

50